

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ. ԳՐԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐ*

ԶԱՐԻՆԵ ՍԱՌԱՋՅԱՆ

Բանալի բառեր՝ Համո Սահյան, պոեզիա, բնություն, մարդ, աշխարհընկալում, պանթեիզմ, հայրենիք, գրական առնչություններ, փիլիսոփայություն:

Նախաբան

Աշխարհն իր փիլիսոփայությամբ արտացոլելու ուրույն հայեցակարգով է ներկայանում նորագույն շրջանի հայ գրականության ականավոր բանաստեղծ Համո Սահյանը: Այդ փիլիսոփայությունը յուրատիպ է իր բնապաշտական, մարդասիրական, զգայական-էսթետիկական ըմբռնումներով: Նրա ստեղծագործությունների թեմատիկ ընդգրկումը հայրենի եզերքն է ու բնաշխարհը, որում արտահայտված են գրողի ոչ միայն ազգային մտածողությունն ու հոգեկերտվածքը, այլև արժեքային համակարգն ու գեղագիտական կողմնորոշումները: Սահյանի ստեղծագործական աշխարհը՝ հեղինակի դավանած գեղարվեստական արժեհամակարգով, ներառյալ ավանդականի ու նորի կիրառումները, շարունակում է մնալ անցյալը, ներկան ու ապագան կամրջող ճանապարհ:

Սահյանի պոեզիան մշտապես եղել է գրականագիտական մտքի ու գրաքննադատության ուշադրության կենտրոնում, առիթ դարձել ամենատարբեր վերլուծությունների ու անգամ բանավեճերի: Բանաստեղծի ստեղծագործություններին անդրադարձել են գրականագետներ Սուրեն Աղաբաբյանը¹, Սերգեյ Սարինյանը², Հրանտ Թամրազյանը³, Սողոմոն Սողոմոնյանը⁴, Դավիթ Գասպարյանը⁵, Արդա Հայրապետյանը⁶, Վահագն Մկրտչյանը⁷, Շնորհ Դավթյանը⁸, Վարդան Հակոբյանը⁹ և ուրիշներ՝ կատարելով ուսումնասիրություններ, դիտարկումներ ու վերլուծություններ:

* Ներկայացվել է 21. VI. 2024 թ., գրախոսվել է 24. VI. 2024 թ., ընդունվել է տպագրության 21. XI. 2024 թ.:

¹ Սովետահայ գրականության պատմություն. 1965, 639–670:

² «Հարթակ» (Երևան), 14–20. IV. 2004:

³ «Գրական թերթ» (Երևան), 22. VII. 1956:

⁴ Ս ո ղ ո մ ո ն յ ա ն. 1967:

⁵ Գ ա ս պ ա ռ յ ա ն. 2003:

⁶ Հ ա յ Ր ա պ ե տ յ ա ն. 1974:

⁷ Մ կ Ր տ չ յ ա ն. 1989:

⁸ Դ ա վ թ յ ա ն. 2001:

⁹ Հ ա կ ո բ յ ա ն. 2008:

Կյանքն ու գործը

Համո Սահյանը (Հմայակ Սահակի Գրիգորյան, 1914–1993) ծնվել է ապրիլի 14-ին ՀԽՍՀ Սիսիանի շրջանի (այժմ՝ Սյունիքի մարզ) Լոր գյուղում: Տեղի դպրոցում ստացել է տարրական կրթություն, որից հետո՝ 1927-ին, տեղափոխվել է Բաքու և Ստեփան Շահումյանի անվան հայկական դպրոցում ստացել միջնակարգ կրթություն: 1937 թ. ավարտել է Բաքվի երկամյա հայկական ուսուցչական դպրոցը, 1939-ին՝ Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական բաժանմունքը (հեռակա ուսուցմամբ), աշխատել է մի շարք թերթերում և ամսագրերում:

1941–1945 թթ. Հ. Սահյանը մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, ծառայել Կասպից և Սև ծովերի ռազմական նավատորմում: Այս տարիներին է ծնունդ առել նրա «Նաիրյան դալար բարդի» բանաստեղծությունը. Վոլգայի ափին, նավի տախտակամածին միայնակ կանգնած, նրա աչքին պատկերանում է հայրենի գյուղն ու բարձունքին կանգնած բարդին, շոշափելու հափ գգում նրա խշռոցը, հիշում է Սահյանը ու պատմում, որ այդպես ծնվեց այդ բանաստեղծությունը, այն 2 տարի պահեց իր հակազգալի պայուսակում, հետո ուղարկեց Ստեփան Զորյանին¹⁰: Վերջինս հավանեց և տպագրեց:

Հ. Սահյան բանաստեղծի կայացման ճանապարհին սկզբնական շրջանում մեծ դեր է ունեցել նաև նշանավոր սայաթովադետ Մորուս Հասրաթյանը՝ իր խորհուրդներով օգնելով երիտասարդ բանաստեղծին: Այս մասին փաստում է նաև գրականագետ Աելիտա Դոլուխանյանը¹¹:

Սահյանի բանաստեղծությունները տպագրվել են դեռևս 1930-ական թվականներից, սակայն համաժողովրդական ճանաչման արժանացավ հենց ռազմաճակատում գրած «Նաիրյան դալար բարդի» բանաստեղծությամբ, որտեղ արտահայտված են բանաստեղծի սերն ու անափ կարոտն առ Հայաստան ու հայրենի եզերքներ:

Համո Սահյանի առաջին գիրքը՝ «Որոտանի եզերքին» բանաստեղծությունների ժողովածուն, տպագրվել է 1946 թ.: Այնուհետև տպագրվել են նրա «Առազատ» (1947), «Ալացքի մեջ» (1950), «Ծիածանը տափաստանում» (1953), «Բարձունքի վրա» (1955), «Նաիրյան դալար բարդի» (1958) ժողովածուները, որոնց մեջ ընդարձակվում են նրա թեմատիկ ընդգրկումներն ու բանաստեղծական տաղանդը:

1972 թ. լույս է տեսել Սահյանի «Սեզամ, բացվիր» ժողովածուն, որի համար 1975 թ. նա արժանացել է պետական մրցանակի: Հաջորդիվ տպագրվել են նրա «Իրիկնահաց» (1977), «Կանաչ, կարմիր աշուն» (1980), «Դադձի ծաղիկ» (1986) երկերը: Մահացել է 1993 թ. հուլիսի 17-ին:

1998 թ. հետմահու լույս է տեսել Սահյանի «Ինձ բացակա չղենք» անտիպ բանաստեղծությունների ժողովածուն:

Սահյանը՝ բնապաշտ

Սահյանի քնարերգության մեջ առնչվում ենք յուրահատուկ բնանկարչության: Պատահական չէ, որ պոետը բնաշխարհի մեջ տեսնում է մինչ այդ չնկատված գույներ, երանգներ, գունային համադրություններ, լսում խորհր-

¹⁰ «Սյունյաց երկիր» (Կապան), 30. III. 2024, 14:

¹¹ Դոլուխանյան. 2022, 49:

դավոր չչունենե՞ր ու նվագենե՞ր: Բնությունը նրա համար ոչ միայն աշխարհընկալման ու յուրատիպ ինքնաճանաչման նախասկիզբ է, այլև մարդկային հոգեաշխարհը ճանաչելու միջոց: Բանաստեղծությունը դառնում է կապող օղակ բնության ու մարդու միջև, Սահյանն իրեն զգում է որպես բնության մի մասնիկ՝ հողին, ծովին, հասկին, ամպին վերապահելով այն, ինչը մարդկային հոգու արժեքային համակարգի բաղկացուցիչն է: Այս առումով բնորոշ է նրա «Հողից սովորեմ» բանաստեղծությունը.

Հողից սովորեմ՝ գոհացնել մարդուն,
 Հովից սովորեմ՝ հովացնել մարդուն:
 Ծովից սովորեմ՝ խորացնել մարդուն,
 Հասկից սովորեմ՝ զորացնել նրան:
 Ամպից սովորեմ՝ հույս տանել մարդուն,
 Խոտից սովորեմ՝ խոնարհվել նրան,
 Վազից սովորեմ՝ վստահել մարդուն¹²:

Մարդու և բնության միասնության, բնության պաշտամունքի, բնության միջոցով մարդու և մարդկային բացահայտման լավագույն վկայություն է Սահյանի պոեզիան, որն իր ամբողջությամբ կարելի է անվանել բնապաշտական:

Գրականագետ Դ. Գասպարյանը Սահյանի՝ պանթեիստ բանաստեղծ լինելու մասին վկայում է, որ նրա պոեզիայի հետ կապված «պանթեիզմ» բառը մշտապես հղումվել է. «Համո Սահյանն ապրում էր խորհրդային հասարակարգում, իսկ այն ժամանակ այդ եզրույթը մեկնաբանվում էր այսպես. «Պանթեիզմ-կրոնափոխության աշխարհայացք, որ բնությունը նույնացնում է Աստծու հետ և բնությունը դիտում որպես Աստծու մարմնացում, համաստվածություն»: Այս կրոն արմատը, որ կա, խորհրդային ժամանակներում արդեն իսկ դատապարտելի էր դարձնում պանթեիզմի առկայության չեղարկումները... Կրոնն այլ բան է, Աստված՝ այլ: Կրոնն ուսմունք է, Աստված՝ պաշտամունք: Սահյանը բնությունը դիտում է որպես աստվածություն»¹³:

Գրականագետ Շնորհ Դավթյանն իր «Համո Սահյան: Կյանքը և գործը»¹⁴ գրքում հերքում է Սահյանի պոեզիայում պանթեիզմի գոյությունը, մինչդեռ գրականագետ Մելս Սանթրոյանը փաստում, որ Հ. Սահյանի պոեզիայում դրսևորվում է պանթեիզմի նոր որակը՝ սահյանականը: «Բնության երևույթների աստվածացման ո՛չ հին տեսակն է պաշտամունքի առարկա դարձնելու միտումը, այլ բնության երևույթների «բանականացման», նրանց էականի մեկնության և պոետական բարդ պատկերավորման պայմանականության՝ հիպերբոլիկ մետաֆորի (չափազանցված փոխաբերություն) օգնությամբ»¹⁵, — գրում է Մ. Սանթրոյանը:

¹² Սահյան. 1984, հ. 2, 341: Այսուհետ հիշյալ ժողովածուի հատորներից (նաև՝ Սահյան. 1984, հ. 1) կատարված մեջբերումների հատորները և էջերը կնշվեն տեքստում:

¹³ «Սյունյաց երկիր», 08. IV. 2024, 31:

¹⁴ Դավթյան. 2007:

¹⁵ <http://www.grakantert.am/archives/5544>

Սահյանը մարդու հուզագգացական աշխարհը՝ իր խոհերով, հույզերով, հոգսերով ու ապրումներով, գծագրում և ամբողջացնում է բառ-պատկերներով, որոնք նրա պոեզիայում արտացոլվում են բնության պատկերների միջոցով՝ օժտված սահյանական ընկալումներին բնորոշ ձայներով, շշուկներով, գույներով, բույրերով: Պոետը ստեղծում է հայրենի բնաշխարհը պատկերող բանաստեղծական համանվագ, որի առանցքը մարդն է՝ իր ճակատագրով, «հույսերից շիկացող», «աշխարհի լայնություններով լցված»: «Լցված աշխարհով» բանաստեղծության մեջ ակնհայտ է վերոնշյալը, և մարդը դառնում է «ներհուն» ու «ներող»:

Աշխարհն իմ մեջ է, և ես՝ աշխարհի,
Զրույց ենք անում աշխարհը և ես,—
Եվ ոչ ոք չկա, որ մեզ խանգարի,
Եվ ոչինչ չկա, որ խանգարի մեզ (Հ. 2, 296):

Եվ «ծեր ու ծծկեր» աշխարհի հետ զրույցի բռնված բանաստեղծն աշխարհի հավերժության մասին խոսք է ասում՝ իր կյանքը համարելով ընդամենը մեկ վայրկյան դարերի հավերժության մեջ, դառնալով այդ հավիտենության ուղեկիցն ու կրողը:

Սահյանի պոեզիան ակունքվում է նրա մանկությունից: Հարցազրույցներից մեկում բանաստեղծն ասել է. «Մանկությունս եղել է շատ աղքատ, բայց կուղենայի կրկնվեր: Եղել է հեքիաթ բնության մեջ: Ես շատ բան սովորեցի, երբ մենակ էի ու գառներ էի արածեցնում. քարը, խոտը, ծաղիկը, ծառը, ժայռը, ջուրը ամբողջ օրը զրուցում էին ինձ հետ: Զարմանալի բան է մանկությունը: Պոեզիան ստեղծվում է, իմ կարծիքով, դրանից ու եթե մարդ ազնիվ է ապրում իր կյանքը, ինչքան էլ երկար ապրի, եթե չի վաճառում իր մանկությունը, մինչև վերջ էլ մնում է մանուկ, և այդ մանկության լույսն օգնում է նրան՝ աշխարհի հետ լինելու մտերիմ, հարազատ, ազնիվ, լուսավոր»¹⁶:

Իհարկե, մանկությունը զուգորդված է մաքրության ու շիտակության հետ, ինչն ընդգծում է բանաստեղծի ընդգրիմությունը կամ հակադրությունը ներկայի իրողությունների հետ:

Սահյանի պոեզիայում առնչվում ենք ոչ միայն բնության, այլև մարդու էության բացահայտման ու ճանաչման մտահայեցողական բանաձևումների, որի արդյունքում բանաստեղծի գեղարվեստական մտածողությունը թե՛ մարդկային անհատական ու թե՛ ընդհանրացված կերպարների վերարտադրությունը դարձնում է դիպուկ ու անշեղ:

«Հայաստանում այն թյուր կարծիքը կար,— գրել է Էդուարդաս Մեծելայտիսը,— թե Համո Սահյանը սոսկ բնության բանաստեղծ է: Սակայն բնությունը Սահյանի մոտ պոեզիայի, ցավի, ուրախության ու հրճվանքի վերածված այնպիսի միագումար է, որին պետք է ոչ թե պահանջներ ներկայացնել, այլ՝ ենթարկվել: Այդպես հնազանդվում ես ուսերիդ իջնող ջրվեժին, հայրական հոգնած աղին, հոգսի՝ քո հասանելիք բեռին: Նրա համար մետաֆորը, յամբը և

¹⁶ «Գրական թերթ», 05. VI. 2009:

պեգորիան այդ բնությունը օժտում են մի պատրանքով, որ որքան անհավանական է, նույնքան հավաստի, որքան անբնական, նույնքան անառարկելի»¹⁷:

Պոետի տողերում տեսնել միայն առարկայական պատկերներ, նշանակում է չնկատել գլխավորը: Նրա երկերում մարդն ու բնությունը միասնական են, անբաժանելի:

«Ո՞վ է ասում բառն է» սկզբնատողով բանաստեղծության մեջ տեսնում ենք բնության հետ մերձ աշխարհի պատկերներ, որտեղ հեղինակը «իր ամեն մի տողը» համարում է «բացվող լուսի շող», «բացվող ծաղկի ցող», «երկրիս մի բուռ հող» և այլն: Կամ՝

Ինչ էլ երգի տողը,
Հոգուս մատը խառն է,
Մինչև անգամ ծառն էլ
Հոգուս մի պատառն է (Հ. 2, 149):

Հայրենիք՝ Սահյանի պոեզիայում

Հայրենիքի ճակատագիրը Սահյանի քնարերգության մեջ առանձնահատուկ տեղ ունի: Հայաստանը բանաստեղծի համար հավերժության ճամփորդ է:

Հայրենիքին նվիրված բանաստեղծություններում բանաստեղծի աշխարհայացքը դառնում է գաղափարախոսություն: Հայաստանին նվիրված պոեզիան աշխարհաքաղաքական բարդ ժամանակներում ապրող փիլիսոփա-գեղագետի խորաթափանց հայացք է: «Ինչի՞ց է, որ Հայաստանում» բանաստեղծության մեջ ընթերցում ենք.

Ինչի՞ց է, որ Հայաստանում
Ջրերը չեն հանգստանում (Հ. 2, 24):

Հարցադրմանը հետևում է պատասխանը.

– Ինչպե՞ս, ինչպե՞ս հանգստանան,
Երբ հայրենի լեռների մեջ
Նրանք չունեն ապաստարան...
Եվ գնում են ապաստանում
Հեռո՞ւ-հեռո՞ւ տափաստանում (Հ. 2, 24):

Ակնհայտ են հայրենիքի ճակատագրով մտահոգ բանաստեղծի տաղնապները. Հայաստանի ջրերը հայրենի լեռների մեջ չունեն ապաստան. գնում են ապաստան գտնելու հեռու տափաստաններում:

Հայրենիք, հայոց լեզու, ձոն մայրենիին, մայրենին՝ որպես ազգային ինքնագիտակցության ու ինքնության պահպանման հիմնասյուն. այս հասկացությունների ու դրանց հանդեպ ունեցած արժեքային կողմնորոշումների բա-

¹⁷ Դ ա վ թ յ ա ն. 2001, 110:

նաձևման գեղարվեստական ինքնատիպ դրսևորում է «Գարունը Հայերեն է գալիս» բանաստեղծությունը, որտեղ ևս հեղինակն իր բանաստեղծական մտքերն արտահայտելու համար ձեռք է մեկնում բնութային:

Ձյուներդ Հայերեն են լավիս,
Հայերեն են հորդում ջրերդ:
Հավքերդ երգում են Հայերեն,
Խոփերդ հերկում են Հայերեն,
Հայերեն են տոկում ջրերդ (Հ. 2, 10):

Ազգային ու համամարդկային գաղափարախոսության հիմքի վրա ձևավորված աշխարհայացքը բնութայինը դարձնում է արժեքների աղբյուր: Ոգեկիր ու շնչավոր խորհրդանիշ են դառնում ձյունը, ջուրը, հավքը, մասրենին, քարափը: Սահյանը, իրավամբ, Հայաստան աշխարհի օրհներգուն է:

Սահյանի պոեզիայում ժամանակը ներկայանում է պատմական ժամանակի բնութագրումով. պատմական ժամանակաշրջան ու պատմական կենսագրություն են խորհրդանշում «Հայաստանը երգերի մեջ», «Նաիրյան դալար բարդի», «Որոտանի եզերքին», «Երգ Հայաստանի», «Հայ ժողովրդին», «Արաքս» և այլ երկեր:

«Հայաստանը երգերի մեջ» բանաստեղծությունը մարմնավորում է Հայաստան երկրի պատմությունը՝ անցյալ, ներկա և ապագա ժամանակներում՝ Հայաստանը հինավուրց, նորօրյա և դեռ չգրված երգերի մեջ. հինավուրց երկիր, տարագիր հայի հոգու բաղձանք, պանդխտության ճամփաներ, որբերի սիրտ, որդեկորույս մայրեր, անտունի, հորովել քաղցրահնչուն, խրախճանքներ՝ այսպիսին է Հայաստանը հինավուրց երգերում: Մի քանի տողի մեջ Սահյանը ներկայացնում է հազարամյա պատմություն ունեցող ժողովրդի կենսագրությունը և երգերի մեջ արտացոլում ժամանակը՝ ժողովրդի կենսաձևով ու կենսատարածություններ, բնավորությամբ ու հոգեկերտվածքով: Այս առումով բնութագրական է «Հայաստանը երգերի մեջ» բանաստեղծությունը.

Մի Վարդանի սրի շառաչ,
Մի Ֆրիկի արդար բողոք,
Մի Սասնա տան թուր-կայծակի
Դավթի հզոր ձեռքերի մեջ. –
Այսպիսին է Հայաստանը
Մեր հինավուրց երգերի մեջ (Հ. 1, 31–32):

Ապա բանաստեղծը գծում է նորօրյա Հայաստանի փառավոր ու հաղթանակած, հույս առաքող պատկերը. ժամանակն այստեղ ամենավեհն է փառքերի մեջ.

Արարատյան երկնքի տակ
Իր ոստանը սրբազործել,
Ամեն մի քարն իր երազի
Արևով է ոսկեզօծել,
Ի հեծուկս նրանց, ուլքեր

Մեր Արարատն առան գերի,
 Իր հանձարի բռնկումով
 Կերտել է Տունն իր երգերի,
 Կերտել է նոր մի Արարատ
 Երկինք մտած շենքերի մեջ.–
 Այսպիսին է Հայաստանը
 Մեր նորօրյա երգերի մեջ (Հ. 1, 33):

Պատմական ժամանակը Սահյանի ինչպես այս, այնպես էլ շատ ու շատ ստեղծագործություններում կենտրոնական թեմաներից է: Պատմական ժամանակը ստատիկ վիճակ չի ճանաչում. այն ապրում է բնության հետ համահունչ՝ ծնունդ, կյանք, մահ, անմահություն: Բնությունը Սահյանի պոեզիայում դառնում է պատմության արտահայտություն:

Սահյանի աշխարհում բնությունն անմահ է, ասել է թե՛ ժամանակն անվերջանալի է, պատմությունը հավերժ է ու հարաշարժ: Մարդկային կյանքի պատմությունը մայրամուտ չունի, բնությունը՝ ևս: Քարի վրա մամուռն է բուսնում ու քարի վրա դիմավորում արևածագն ու մայրամուտը և այսպես անվերջ՝ նորից ու կրկին ... Բնության հարաշարժության մեջ են պատմությունն ու ժամանակն արտացոլվում, նույնականանում ու մշտահոյով կրկնությունն ու ժամանակի վախճանին.

Մի փոշոտված փշատենի,
 Մի հոշոտված խաղողի որթ,
 Նորքի վրա մի հին բարդի,
 Մի հին բուստան Արազի մոտ,
 Մի տարազիր հոգու բաղձանք,
 Մի ծիծեռնակ ու մի կռճենկ,
 Պանդխտության ճամփաներում
 Հազար քարի բախված կրճենկ ... (Հ. 1, 30)

«Հայաստանը երգերի մեջ» բանաստեղծությունում բնությունն արտացոլում է հայ ժողովրդի պատմությունը, բանաստեղծը պատմական ժամանակի դրսևորման միջոց է ընտրել բնությունը, և «փոշոտված փշատենին» ու «հոշոտված խաղողի որթը» հիշեցնում են հայոց պատմության արյունոտ էջերը, հին բարդին այստեղ հինավուրց ազգի խորհրդանիշն է, իսկ ծիծեռնակն ու կռճենկը՝ պանդխտությունն են խորհրդանշում: Այսպիսով Սահյանը բնությունը դիտարկում է նաև որպես պատմական ժամանակը բնութագրող և իր բանաձևումներով հանդուստ է անմահության գաղափարին՝ հավերժ են Հայաստանն ու հայը:

Հայաստանը հավերժ է, ժամանակն ու մահն անգոր են կենսահաստատ ժողովրդի առջև, ուստի.

Շաղ է տալիս բերքն իր բարի
 Անմահության հերկերի մեջ
 Իմ բարձրաբերձ Հայաստանը
 Դեռ չգրված երգերի մեջ (Հ. 1, 34):

Ժամանակի տազնապները

Սյունյաց աշխարհի բնության անկրկնելի գեղեցկություններին զուգադրելով հասարակական-սոցիալական կյանքի երևույթները՝ Սահյանն ընդգծված ձևով ներկայացնում է իրականության ողբերգական, ստվերոտ կողմերը: Եվ այս առումով նա արձագանքում է մեր քնարերգության մեծ ողբերգականներին: Եթե նախորդների մոտ ողբերգության ակունքներն ազգի եղեռնական ցավի մեջ են, ապա Սահյանի պարագայում ողբերգության հիմքերը պիտի փնտրել խորհրդային «խաղաղ» օրերի մղձավանջի մեջ: Եվ Սահյանի մոտ բնության գեղեցկություններին հակադրվում են սոցիալական անարդարությունները, չարիքը: Ուշադրություն դարձնենք Հայրենական տան սահյանական պատկերներին «Չտեսների» բանաստեղծությունում.

Չտեսների, մեր երգի ծուխ,
Քեզ կտրված չտեսների:
Ախ, մեր սյունի ծունկը ծավալած,
Վիզը ծոված չտեսների (Հ. 2, 173):

Այս բանաստեղծությունը մի ամբողջական ողբ է՝ դատարկվող, ավերակվող Հայրենիքի ու Հայրենի տան մասին:

Առհասարակ, քարը, տունը, հողը, քարափը հասկացությունները Սահյանի գեղագիտության մեջ անընդհատ գործողության մեջ դրվող եզրույթներ են, յուրաքանչյուր անգամ բանաստեղծության մեջ դրանք ներկայանում են նոր գույներով, ձևով բերում իմաստային նոր երանգներ:

«Մեր տան պատից մի քար լինեք» սկզբնատողով բանաստեղծության մեջ Հայրական տան քարը «ապուպապուտ» է, և հեղինակի հոգևոր կապը նրա հետ անքակտելի է.

Մեր տան պատից մի քար լինեք,
Նստեի վրան
Ու պատմեի անտուն կյանքիս
Հեքիաթը նրան (Հ. 2, 51):

Պատկերը բանաստեղծի լեզվի մեջ արտաքին նկարագրականից «տեղափոխվում է» ներքին տրամաբանության դաշտ՝ ներկայացնելով երևույթի էական կողմերը: Եվ ահա այստեղ է, որ իր «տան մեջ անտուն» մնացած բանաստեղծի կյանքի «հեքիաթը» ներկայանում է ինքնաձադկման խորը ապրումների ու խռովքի մեջ, ուր նկատելիորեն ընդգծվում է հեղինակի կողմից նրբորեն, գրեթե չերևացող հեզմանքը՝ որպես պատկերավորության միջոց: Սահյանը ժողովրդական ողբասացների ոճն ու մտածողությունը նորովի է կիրառում իր պոեզիայում՝ նրանց մեջ պահպանելով ազգային ոգին ու իմաստությունը: Ուշադրություն դարձնենք «Պտուղը քաղող չկա» բանաստեղծությանը.

Պտուղը քաղող չկա,
Մաւրենի, սարի մաւրենի,
Պատիվը պահող չկա,
Մաւրենի, բարի մաւրենի (Հ. 2, 116):

Ժողովրդական ողբասացների մտածողությանը հատուկ կրկնությունները («Մարենի, սարի մարենի») գեղարվեստական խոսքը դարձնում են ավելի ազդեցիկ ու հուզական, ամբողջության մեջ՝ եղերական ու համոզիչ: Ոճական այս հնարանքը հոգևոր աղերսներ ունի Թումանյանի «Մարո» պոեմում նկարագրվող տեսարանի հետ, երբ Մարոյի մայրը ողբում է. «Ո՛վ քեզ ծեծեց, Մարո ջան // Ո՛վ անիծեց, Մարո ջան»¹⁸:

Եվ, որ ամենակարևորն է, ժողովրդական բանահյուսության հենքի վրա կառուցելով իր գեղարվեստական խոսքը՝ Սահյանը կարողանում է մաքուր, «արքայական լեզվի» միջոցով ներկայացնել ազգային բնավորություն ու նկարագիր:

Աշխարհի անցուղարձը նոր ողբերգությունների մորմոք է ծնում բանաստեղծի խոհերում:

Խորհրդային իշխանությունների վարած քաղաքականությունն ու Հայրենական մեծ պատերազմի պատճառած ավերածությունները նոր ողբեր են ծնում բանաստեղծի աշխարհում՝ ավելացնելով ազգի ցավն ու մորմոքը:

Այդ մորմոքն ու կորստի ցավը, որոնք պսակվում են անմարելի հավատով, տեսնում ենք «Որդիս կգա» բանաստեղծության մեջ, որը որդեկորույս ծնողի և, առհասարակ, պատերազմների պատճառած ցավի գեղարվեստական ինքնատիպ արտոցումն է.

Հաղթություն եկավ: — Որդիս կգա:

Զորքը տուն եկավ: — Որդիս կգա:

Հոտից գառ բերեց: — Որդիս կգա (Հ. 2, 344):

Ժամանակն անցնում է, և այս ընթացքը հեղինակը վարպետորեն ցույց է տալիս կարճ, բայց ասելիքով հարուստ տողերով՝ «կռունկը չվեց», «պատը ճաք տվեց», «մեջքը կորացավ», «մտավ անկողին», «գժվար էր շնչում», բայց հավատը չէր լքում ծնողին. ավելին, հավատն ապրում է անգամ նրա մահից հետո: Ահավասիկ.

Հոգին էր փչում: — Որդիս կգա:

Բոլորեց տարին, աչքս վկա,

Կարդացինք քարին — «Որդիս կգա» (Հ. 2, 345):

Ցավն անսփոփ է դառնում, երբ տառապանքի մեջ հավատն ու հոգին՝ որպես միասնական տաճար, ավերվում են:

Այս տրամադրությունները նոր որակ ձեռք բերեցին Սահյանի՝ անկախության տարիների ստեղծագործություններում: Բանաստեղծն իր սրտի վրա զգաց ժամանակի ծանրությունը: Մութ ու ցուրտ օրեր ապրեց մի ամբողջ ժողովուրդ, բնականաբար, ժողովրդի հետ նրա ցավը կիսեց բանաստեղծը: Դժբախտաբար, Սահյանի կյանքի վերջին տարիները դժվարին էին ոչ միայն բանաստեղծ-քաղաքացու, այլև մեր ամբողջ ժողովրդի համար: Եվ ծնունդ է առնում Սահ-

¹⁸ Թումանյան. 1989, 14:

յանի «Գնանք օտարի դռները բախենք» բանաստեղծությունը, որը, ասես, հայելու մեջ արտացոլում է ժամանակի պատկերը.

Գնանք օտարի դռները բախենք,
Թերմացքներ մուրանք, որ սովը թաղենք ...
Ավելի լավ չէ՞, որ մեզ ազդովի
Այս անկախության պարանով կախենք
Ու ճոճվենք՝ մինչև վերևից նայի,
Տեսնի, սարսուռ, սարսափի Աստված
Եվ, իր ստեղծած աշխարհի նման,
Մեզ վերջին անգամ մի բան խոստանա
Ու խաբի Աստված ...¹⁹

Այս հուսահատ տրամադրությունների և ժամանակի իշխանությունների հանդեպ ունեցած դժգոհությունից են ծնունդ առել նաև բանաստեղծի «Աղոթեմ» բանաստեղծության տողերը.

Փոխվել են դերերն ու տեղերը,
Բայց նույնն է երախը վիշապի...
Սրանք են այս երկրի տերերը,
Աղոթեմ, որ մահս չտապի...²⁰

Սահյանը եզակի նյարդով զգաց դաժան իրականության մտահոգությունները և չարենցյան բնորոշմամբ դարձավ «իր ժամանակի շունչը»: Բանաստեղծի «նաիրյան մորմոքները» առավել մեծ շեշտադրում ստացան հատկապես Արցախյան շարժման ու ազատամարտի տարիներին, որը տեսնում ենք նաև «Որտեղի՞ց այսքան ցավ ու թախիծ» բանաստեղծության մեջ.

Որտեղի՞ց այսքան ցավ ու թախիծ, –
Քարեր են փշրվում սրտիս վրա ...
Գուժեր են գալիս Ղարաբաղից,
Սարեր են փշրվում սրտիս վրա,
Կռվում են այնտեղ քաջերն ազգի ...
Եվ, ահա, նախերգը նրանց ապքի
Ողբի է փոխվում և մահազգի,²¹
Դարեր են փլվում սրտիս վրա:

Սահյանը, բնականաբար, մեծ վիշտ էր ապրում Արցախյան պատերազմում մեր ժողովրդի ունեցած մարդկային կորուստների համար, և ահա 1992 թ. դեկտեմբերին նա գրում է. «Մտքիցս չեն գնում Ղարաբաղում ընկած մեր էդ տղաները: Ես լաց եմ լինում. ինչ մերեր են բերել, ինչ ոգի են, ազգի ոգի ասածդ իրենք են: Ազգի փրկության համար մարտադաշտ իջածը այլևս վեր է

¹⁹ Սահյան. 2004, 235:

²⁰ Սահյան. 2004, 216:

²¹ Սահյան. 2004, 227:

ամեն մի կուսակցության անդամ լինելուց, վեր է ամեն մի բանից: Բոլորը միասին ազգի զավակներ են, ազատամարտիկներ, փրկիչներ, հրաշալիներ:

Ամենասարսափելի բանը, ամենացավալի բանը, որ էս ընթացքում մեզ հետ կատարվեց, էդ տղաների կորուստն է: Ազգի ընտրանին, ամենալավ տղերքը գնացին: Գենը գնաց, տեսակը գնաց: Ոնց որ հատուկ ընտրես տանես: Բայց թե՛ իրենք իրենց են ընտրում: Պատրաստված, խելոք, կարդացած տղաներ: Մեռան գնացին: Անուններն էլ չկան: Վա՛յ, վա՛յ, ո՞նց պիտի վերականգնենք: Այս տղաները գերազանցում են մեր ֆիդայիներին, նախորդ մեր բոլոր նվիրյալներին: Էդպես էլ պիտի լիներ, այլապես ազգը չէր գոյատևի: Էդ տղերքը պիտի ազգն առաջնորդեին, երկիրը ղեկավարեին ... Սրանք մեծերի մեջ են...»²²:

Եվ որքան էլ տրամադրությունները հոռետեսական լինեն, այնուամենայնիվ, անգամ ամենահուսահատ պահին, գրողին չեն լքում ժողովրդական լավատեսությունն ու հավատը: Խոսելով մեր զոհված քաջերի մասին հառաչում է նա՝ «Ինչ մերեր են բերել ...»: Պարզ է, որ նման հերոսներ ծնող ժողովրդի հավերժությունը կասկած չի կարող հարուցել, և գրողի տխրությունն անգամ դառնում է մի նոր խիզախման ելքի դուռ:

Մարդու ներաշխարհի բացահայտումը

Բանաստեղծն իդեալականացնում է բնությունը նախաստեղծ մաքրությունը: Մարդն ու բնությունը շաղկապված են իրար և միմյանց զորացնում են Սահյանի ստեղծած աշխարհում:

Բնությունն այնքան կենդանի և ճշգրիտ է արտացոլվում սահյանական պոեզիայում, որ այն դառնում է պաշտամունք: Սահյանի բնապաշտական երկերի փիլիսոփայությունը դառնում է իր քարտեզագրած հայրենի եզերքի, նրա բնության ամեն մի փոքր պատկերի յուրատեսակ դավանանքը, նրա գեղարվեստական մտքի ոգեղեն հիմքը: Քարափը, մասրենին, դալար բարդին, առու, ծառի ստվերն ու մայրամուտը, հավքն ու լույսը, հողն ու հասկը, կածանն ու ջրաղացը դառնում են Սահյանի պոետական մտածողության խորհրդանիշների համակարգը, բնության ու մարդու, նրանց փոխադարձ հարաբերությունների ներդաշնակությունը:

Բնությունը դիտվում է որպես մարդուն ազնվացնող, մաքրագործող երևույթ, հետևապես, հաստատուն՝ պոետի գրական-գեղարվեստական համապատկերում: Բնության հետ նույնացման երևույթի օրինակ է գեղարվեստական ինքնատիպ պատկերներով հարուստ «Մենք իրար ճանաչում էինք» բանաստեղծությունը:

Մենք իրար ճանաչում էինք,
Իրար հետ կանաչում էինք,
Մեր բակի ծաղիկը ու ես:
Մենք իրար ճանաչում էինք,
Իրար հետ կարկաչում էինք,
Մեր գետի ալիքը ու ես²³:

²² «Սյունյաց երկիր», 30. IV. 2024, 77–78:

²³ Սահյան. 1981, 120:

Ինչպես տեսնում ենք, բնությունը դառնում է մարդու մարդկայնացման հիմք: Բնության հետ նույնացման մեջ մտնելու փիլիսոփայությունը դառնում է սահյանական բնապաշտության բնորոշ կողմ:

Գրականագետ Դ. Գասպարյանը նշում է. «Սահյանն Ակսել Բակունցին կարող էր գրական հայր կոչել: Այն, ինչ Բակունցն արեց արձակով, Սահյանն արեց պոեզիայով: Ընդհանրության հիմքը բնաշխարհի այբուբենը նույն բնաշխարհի մարդու հոգով ու աչքով կարդալու մեջ է: Բակունցյան հերոսների լուծությունը փոխանցվեց ոչ միայն Սահյանի մարդկային նկարագրին, այլև նրա բանաստեղծություններին»²⁴:

Եթե փիլիսոփայությունը հաճախ դիտվում է որպես յուրատեսակ կամուրջ և միջնորդ մարդու և բնության միջև²⁵, ապա սահյանական պոեզիայում «Հրամայեք» բանաստեղծությունում այն դառնում է մերձեցված, նույնակա-նացված վիճակ, բնության հետ մեկ ամբողջական միավոր:

Ապառաժներ համր ու հանդարտ,
Հողակիցներ իմ թանկագին,
Զորավարներ անսաղավարտ,
Թագավորներ անթագակիր,
Եկել եմ, որ լսեմ դարձյալ
Խորհուրդը ձեր փակ բերանի,
Լուծությունը ձեր քառաձայն,
Համրությունը ձեր լեզվանի:
Կանգնեք այդպես իմ շուրջբոլոր,
Հրամայեք, որ քարանամ
Եվ ձեզ նման բոլոր, բոլոր
Սերունդներին ընկերանամ²⁶:

Հիրավի, Սահյանի պոեզիան ներկայանում է աշխարհն ազնվացնելու մղումով, և ճակատագրով թիապարտ գրողի տողը տրոփում է ժամանակի ընթացքին համահունչ մերթ տազնապահար, մերթ մտախոհ, բայց միշտ լուսավոր ու ազնվացնող:

Սիրերգությունը

Յուրատիպ է նաև Սահյանի սիրերգությունը: Նրա սիրո երգերը ևս հյուսվում են բնության հետ ներդաշնակ, բնապատկերների զուգակցմամբ:

«Գեղջկական սիրո» հրաչքը երազող Սահյանի համար սիրո օբյեկտը մերթ ջաղացականի աղջիկն է «Հրաչք լինեք» բանաստեղծության մեջ:

Հրաչք լինեք կրկնվեք
Այն հրաչքը իրական,
Առուն ստվերս տանեք
Զաղացականի աղջկան:

²⁴ Գասպարյան. 2003, 58:

²⁵ Հակոբյան. 2009, 8:

²⁶ Սահյան. 1972, 66:

Գար խափաներ, խաթարեր
 Իմ ջաղացը մանկական,
 Նրա հետ սերս տաներ
 Զաղացականի աղջկան (Հ. 2, 20):

Մե՛րթ ծովի, գիշերվա ու աստղերի հետ դաշնություն հյուսող քնարական հերոսուհին է, որի հետ բանաստեղծը գտնում է սիրո կատարելության պահը «Ծովն էր, գիշերն էր ...» բանաստեղծության մեջ.

Մենք մեզ իրար մեջ որոնում էինք,
 Դաշնությունն էինք հյուսում մեր հոգու,
 Աստղերից կախված օրորվում էինք,
 Ծովն էր, գիշերն էր, ես էի և դու (Հ. 1, 192):

Մե՛րթ «իր գրկի մեջ ուրիշինը» և միայն «վերքի մեջ իրենը» ճակատագրական կինը, որը դառնում է բանաստեղծի տառապանքի երգի պատճառը «Դու իմ կյանքն էիր ...» բանաստեղծության մեջ.

Դու իմ գրկի մեջ ուրիշինն էիր,
 Իմն էիր միայն իմ երգի մեջ:

Առաջինն էիր, ու վերջինն էիր
 Իմ անքուն, անքեն տարերքի մեջ:
 Դու իմ ձեռքի մեջ ուրիշինն էիր,
 Իմն էիր միայն իմ վերքի մեջ (Հ. 1, 327):

Հ. Սահյանի սիրո երգերը, պատանեկան երջանիկ ակնթարթից դեպի հասունություն վերափոխվելով, դառնում են խորունկ, հոգու փոթորիկներից ծնվող սիրերգեր, որտեղ նկատվում է անպատասխան սիրո տառապանքը:

Տառապանքը շեշտադրված է «Դու ուզեցիր» բանաստեղծության մեջ, որտեղ հեղինակի «իր տան մեջ միակ ավելորդը լինելու» ցավը ծնվում է բոլորանվեր այն մեծ սիրուց, որը, սակայն, անպատասխան է.

Դու ուզեցիր, որ ես
 Փոխվեմ հազար անգամ,
 Բայց և հինը լինեմ:
 Քեզ ուրիշին տվիր
 Եվ չուզեցիր անգամ,
 Որ ես իմը լինեմ:

Դու ուզեցիր, որ ինձ
 Քո մեղքերով չափեմ
 Ու մեղքի տակ մնամ,
 Քո մեղքերի վրա
 Իմ աչքերը փակեմ
 Եվ անգիտակ մնամ ... (Հ. 2, 130)

«Իզուր է հերքելը» բանաստեղծությունը սկսվում է մեղքերը ներելու շեշտադրումով. մի հանգամանք, որը վկայում է հեղինակի մեծ սերն ու այդ սիրուց ծնվող ներումը.

Ինչքան որ ուժերս ներել,
Ներել եմ մեղքերդ (Հ. 2, 130):

Ապա շարունակության մեջ խոստովանում, որ ոչինչ հարկավոր չէր, «հերիք էր լինելը սիրելի».

Ինձ համար հերիք էր արդեն
Ժպտալդ ու լալդ,
Երբ գալդ պարգև էր մի մեծ,
Ուր մնաց մնալդ (Հ. 2, 131):

Գեղազգիտություն և հոգևոր աղերսներ

Սահյանի գեղազգիտական ըմբռնումները բազմատարր են, որի շղթան սկիզբ է առնում դեռևս Գրիգոր Նարեկացուց, շարունակվում Սայաթ-Նովայով: Նրա պոետական աշխարհում զգացվում է հայոց էպոսի համն ու հոտը: Բանաստեղծի գեղազգիտական ըմբռնումների ձևավորմանը մեծապես նպաստել են նաև Թումանյանը, Մեծարենցը, Տերյանը, Գարսիա Լորկան, Եսենինը: Զևարդյանով որպես անկրկնելի քնարերգու Սահյանն իր անխամբելի հետագիծը թողնց հայ գրականության անդաստանում:

Սահյանի պոեզիան իր դասական կերտվածքով ու ժողովրդական մտածողությամբ ներքին աղերսներ ունի թե՛ թումանյանական, թե՛ տերյանական արվեստի հետ՝ երևույթի ամենադրական իմաստով: Բանահյուսական խոսքը հաճախ անփոփոխ ձևով բանաստեղծը ներկայացնում է պոետական իր կառույցի մեջ՝ ստեղծելով պատկերային մտածողության նոր որակ ու մակարդակ:

Երբ ստեղծագործությունն ակունքվում է բանահյուսությունից, նշանակում է՝ այն իր իմաստասիրական շերտերով գնում է դեպի ժողովրդական մտածողություն, ինչը բնորոշ է հայ դասական բանաստեղծությանը:

«Ես ուրիշ տեղ չկամ» բանաստեղծությունը հետաքրքիր ու իմաստային նոր շերտեր է բացում.

Երգիս տունը տատիս տան պես
Հայկական է ու հին,
Ու կապված է սիրտս շան պես
Նրա ամեն քարին (Հ. 1, 292):

Երգի տունը նոր իմաստ է ձեռք բերում Սահյանի տողերում, երբ այն համեմատում է «տատի տան» հետ: Դրանով բանաստեղծն ընդգծում է ոչ միայն բանաստեղծության ազգային նկարագրի կարևորությունը, այլ նաև նրա հարազատությունը՝ «հին»-ը ներկայացնելով որպես ժամանակի ու դիմացկունության որակ:

Բանահյուսական մտածողությունը հատուկ է Սահյանի քնարին: Հաճախ բանահյուսում է հենց գրողը: Եվ նրա տողն է գնում դեպի ժողովուրդը՝ ձուլ-

վելով նրա բառ ու բանին՝ «Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ» կամ «Լեռան գագաթին օրն ուշ է մթնում» և այլն:

Սահյանի պոեզիայի գլխավոր երակը ուղիղ գծով գնում է դեպի մեր ազգային բանահյուսությունը: Ստեղծագործական իր հավատամքն այսպես է բանաձևել ինքը՝ հեղինակը. «Ես ինձ համարում եմ բուն ժողովրդական (Քուչակ—Սայաթ—Նովա—Թումանյան) և ոգեղեն (Նարեկացի—Շնորհալի—Չարենց) գծի մեջտեղի բանաստեղծ՝ ես ձգտել եմ այն բանին, որ այս երկու թևերը իմ մեջ ձուլվեն, խառնվեն իրար: Ես ձգտել եմ ժողովրդական-ֆոլկլորային մտածողությունը դնել մյուս ձևերի մեջ: Բայց, համենայնդեպս, ես պետք է խոստովանեմ, որ ժողովրդական մտածողությունն ինձ ավելի հարազատ է եղել: Իմ գրական հակումները բազմաթիվ կողմերով պայմանավորված են մեր լեզվով. մեր լեզուն մեր ազգային նկարագիրը լիովին պահպանել է»²⁷:

Թարգմանությունները՝ ստեղծագործական աշխարհի մաս

Սահյանի ստեղծագործական աշխարհի մասն են կազմում նաև նրա կատարած թարգմանությունները: Նա թարգմանել է գործեր Ալեքսանդր Պուշկինից, Սերգեյ Եսենինից, Յարոսլավ Սմելյակովից, Ֆեդերիկո Գարսիա Լորկայից, Պոլ Էլյուարից և այլ բանաստեղծների ստեղծագործություններ, որոնց պոետական մտածողությունն ու արվեստը, աշխարհընկալումն ու փոխադասական հայացքները հոգեհարազատ են իրեն:

Բնության պաշտամունք, պատկերավոր մտածողություն, անմիջականություն, խոր հումանիզմ, հավատ ու սեր հայրենիքի հանդեպ. ահա եսենինյան պոեզիայի այն գլխավոր հատկանիշները, որոնք Սահյանին ոչ միայն կապել են ուսման մեծ պոետի ստեղծագործական աշխարհին, այլ նաև զգալիորեն նպաստել նրա գեղագիտական աշխարհայացքի ձևավորմանը: Ի դեպ, Սահյանը մի առիթով ասել է. «Իմ բանաստեղծական աշխարհի ճանապարհը ցույց է տվել Թումանյանը, իսկ բանալին Եսենինն է տվել»²⁸:

Նրա կատարած թարգմանություններից ուշագրավ են Արսենի Տարկովսկու «Կոմիտաս», Ալեքսանդր Պուշկինի «Ճշմարտություն», Լև Օգերովի «Ինչպե՞ս ապրեմ»²⁹, Ալեքսանդր Յաշինի «Աստված», Սերգեյ Եսենինի «Ես թողի հեղուկ»³⁰ գործերը:

Եսենինի վերոնշյալ բանաստեղծության մեջ ակնհայտ է մարդու և բնության մերձեցումը, կարոտը հայրենի եզերքի հանդեպ, բնության անձնավորումը, ինչը հոգեհարազատ է նաև Սահյանին, որն էլ, թերևս, դարձել է պատճառ այն թարգմանելու:

Ես գիտեմ, իրեն գգվողի համար
Նա իր մեջ ունի խնդություն մի խոր,
Լույս այն պատճառով, որ ինձ է նման
Այն հնամենի թխկին իր գլխով³¹:

²⁷ «Սյունյաց երկիր», 08. IV. 2014, 7:

²⁸ Մ կ ր տ չ յ ա ն. 1984, 168:

²⁹ «Սյունյաց երկիր», 30. IV. 2024, 31:

³⁰ «Սյունյաց երկիր», 08. IV. 2014, 92:

³¹ «Սյունյաց երկիր», 08. IV. 2014, 92:

Այս բանաստեղծության մեջ հայրենի եզերքից հեռու գտնվող Եսենինն իր կարոտն արտահայտելու միջոց է ընտրում բնութային, մասնավորապես՝ թխկին, որը հայ ընթերցողին ակամա հիշեցնում է սահյանական նաիրյան դալար բարդին:

Բնության երևույթների փխխտության և ընկալման ներքին ընդհանրությունների ու ըմբռնումների շնորհիվ է, որ Սահյանին հաջողվում է Եսենինի բանաստեղծությունը հայ ընթերցողին մատուցել ոչ թե «ապակու տակ դրված վարդի գեղեցկությամբ», այլ՝ իր ամբողջ բուրմունքով, բնականությամբ, պատկերային կառուցակարգերի ճիշտ վերարտադրությամբ՝ պահպանելով բնագրի ինքնատիպությունը:

Հ. Սահյանի թարգմանական հետաքրքրությունները չեն սահմանափակվել միայն ուսու գրականությամբ: XX դ. իսպանական պոեզիայի նշանավոր դեմքերից մեկի՝ Ֆեդերիկո Գարսիա Լորկայի ստեղծագործությունները հայ ընթերցողին ներկայացան Սահյանի թարգմանությամբ՝ «Մեղրի երգը» գրքով³²: Ժամանակին Սահյանի և Լորկայի պոետական աշխարհների միջև առկա ներքին աղերսների մասին խոսել է ուսու պոետ և թարգմանիչ Լև Օզերովը՝ ընդգծելով գույնի գեղագիտական ընկալումների նրանց ընդհանրության մասին: «Քամին Ձեր մի բանաստեղծության մեջ նախ կանաչ է, ինչպես Լորկայի մոտ, հետո՝ կարմիր, հետո՝ դեղին, իսկ հետո՝ սպիտակ: Քամիների մի ամբողջ գամմա: Եվ դա խաղ է: Ձեր քամին կապույտ է (այնուամենայնիվ, կապույտը Ձեր սիրած գույնն է)»³³, – դիմելով Սահյանին՝ գրել է Օզերովը:

Գրականագետ Դ. Գասպարյանը, խոսելով Սահյանի թարգմանությունների մասին, նկատում է. «... եթե առանձնացնենք այս բնագավառը, ձևակերպենք և ասենք՝ Սահյանը թարգմանիչ, չեմ կարծում, թե կհնչի: Կար ժամանակ, երբ թարգմանություններ էին անում փող աշխատելու նպատակով: Դա ես բնորոշել եմ որպես թարգմանական ինդուստրիա: Համո Սահյանը չգնաց այդ ճանապարհով, բայց ինչ որ արել է, արել է իր նման»³⁴:

Սահյանի ստեղծագործությունները ևս թարգմանվել են մի շարք լեզուներով, որոնք նպաստել են նրա պոեզիայի հանրահռչակմանը նաև օտարալեզու ընթերցողների շրջանում:

Եզրակացություն

Համո Սահյանը, լինելով նորագույն շրջանի հայ գրականության ականավոր բանաստեղծներից, իր ստեղծագործական ժառանգությամբ ուրույն և անխամբելի հետագիծ թողեց: Խորապես լինելով ազգային՝ նա ազգային երակով գնում է դեպի համամարդկային: Նրա ստեղծագործությունների հենքը բնության և մարդու միաձուլմամբ ներդաշնակության, մարդուն ազնվացնելուն, մարդկայնացման, ազգային ու համամարդկային արժեքների հաստատման հասնելն է, որով նա ընդգծում է գեղագիտական իր դավանանքը և քայլում ժամանակին համահունչ՝ մնալով միշտ արդիական:

³² Լ ո Ր Կ ա. 1965:

³³ Ս ա հ յ ա ն. 1972, 270:

³⁴ «Սյունյաց երկիր», 08. IV. 2014, 31:

Զարինե Սառաջյան – բ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Հայ նոր գրականության բաժնի կրտսեր գիտաշխատող, ԵՊՀ մարքեթինգի բաժնի ավագ մասնագետ: Գիտական հետաքրքրություններ՝ Հայ նոր և նորագույն շրջանի գրականության պատմություն: Հեղինակ է 3 գրքի և 9 հոդվածի: ORCID:0009-0005-4103-2492.
zsarajyan@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Գասպարյան Դ. Վ. 2003, Համո Սահյան: Կյանքը և ստեղծագործությունը, Երևան, «Զանգակ-97» հրատ., 368 էջ:
- «Գրական թերթ» (Երևան), 22. VII. 1956, 05. VI. 2009:
- Դավթյան Շ. 2001, Համո Սահյան. Բանաստեղծը, մարդը, մտածողը, Երևան, «Վան Արյան» հրատ., 360 էջ:
- Դավթյան Շ. 2004, Համո Սահյան բանաստեղծի հավատամքը, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 244 էջ:
- Դավթյան Շ. 2007, Համո Սահյան: Կյանքը և գործը, Երևան, «Արտագերս», 261 էջ:
- Դուլիսանյան Ա. 2022, Մորուս Հասրաթյան: Ինքնության և ժառանգության վավերագիրը, Երևան, «Նյու Մեք», 228 էջ:
- Լորկա Ֆ. Գ. 1965, Երևան, «Հայաստան» հրատ., 51 էջ:
- Հակոբյան Վ. 2008, Երկեր, հ. Ե, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս» հրատ., 646 էջ:
- Հակոբյան Ս. 2009, Փիլիսոփայության տեսություն և պատմություն: Ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Երևան, հեղինակային հրատ., 472 էջ:
- Հայրապետյան Ա. 1974, Բնությունը և մարդը Համո Սահյանի պոեզիայում, Երևան, «Լույս» հրատ., 63 էջ:
- «Հարթակ (Երևան)», 14–20. IV. 2004, հ. 14:
- Հովհ. Թումանյան. 1989, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 542 էջ:
- Սկրտչյան Լ. 1984, Զրույցներ բանաստեղծի հետ, Երևան, «Սովետական գրող» հրատ., 184 էջ:
- Սկրտչյան Վ. 1989, Համո Սահյանի բանաստեղծական բնափիլիսոփայությունը, Երևան, «Հայաստան» հրատ., 50 էջ:
- Սահյան Հ. 1962, Հայաստանը երգերի մեջ, Երևան, «Հայպետհրատ», 460 էջ:
- Սահյան Հ. 1967, Երկերի ժողովածու, հ. Ա, Երևան, «Հայաստան» հրատ., 430 էջ:
- Սահյան Հ. 1972, Սեզամ, բացվիր, Երևան, «Հայաստան» հրատ., 280 էջ:
- Սահյան Հ. 1981, Տոհմի կանչը, Երևան, «Սովետական գրող» հրատ., 384 էջ:
- Սահյան Հ. 1984, Երկեր, հ. 1, 392 էջ, Երկեր, հ. 2, 440 էջ, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
- Սահյան Հ. 1986, Դաղձի ծաղիկ, Երևան, «Սովետական գրող» հրատ., 216 էջ:
- Սահյան Հ. 1999, Քարե պատարագ, Հատընտիր, Երևան, «Նաիրի» հրատ., 332 էջ:
- Սահյան Հ. 2004, Ինչ էլ լինի, կգամ, Երևան, «Զանգակ-97» հրատ., 232 էջ:
- Սահյան Հ. 2004, Ինձ բացակա չղնեք, Երևան, «Զանգակ-97» հրատ., 256 էջ:
- Սովետահայ գրականության պատմություն. 1965, հ. II, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 773 էջ:

Սողոմոնյան Ս. 1967, ժամանակակից հայ բանաստեղծներ, Երևան, «Հայաստան» հրատ, 514 էջ:

«Սյունյաց երկիր» (Կապան), 08. IV. 2014, 30. III. 2024:

АМО САГИЯН: ЛИТЕРАТУРНЫЙ ПОРТРЕТ

ЗАРИНЕ САРАДЖЯН

Резюме

Ключевые слова: Амо Сагиян, поэзия, природа, человек, мировоззрение, пантеизм, родина, литературные связи, философия.

Амо Сагиян (Амаяк Саакович Григорян, 1914–1993) родился 14 апреля в селе Лор Сисианского района АрмССР (ныне – Сюникский марз). В местной школе получил начальное образование, затем, в 1927 г., переехал в Баку, где в армянской школе им. Степана Шаумяна получил среднее образование. В 1937 г. закончил бакинскую двухгодичную армянскую учительскую школу, в 1939 г. – филологическое отделение Бакинского педагогического института (заочно), сотрудничал в ряде газет и журналов.

В 1941-1945 гг. Амо Сагиян участвовал в Великой Отечественной войне, служил на военном флоте Каспийского и Черного морей.

Печататься А. Сагиян начал в 1930-х годах. Первый его сборник поэзии «На берегу Воротана» вышел в свет в 1946 году. Затем последовали сборники «На высотах» (1955), «Зеленый тополь» (1958), «Армения в песнях» (1962), «Перед закатом» (1964), «Песнь скал» (1968), «Годы мои» (1970), «Сезам, откройся!» (1972), «Зови, журавль!» (1973) и другие. Сагиян переводил Александра Пушкина, Сергея Есенина, Льва Озерова, Гарсия Лорки и других поэтов. Его произведения также переведены на несколько языков. Духовные корни поэзии Сагияна связаны с Кучаком, Саят-Новой, Туманяном, а также Нарекаци, Терьяном и Чаренцем. Его поэзия, будучи глубоко национальной, имеет также мировое значение благодаря своим гуманистическим идеям. В основе поэзии Сагияна лежит достижение гармонии, благородства, гуманности, утверждения национальных и общечеловеческих ценностей путем слияния природы и человека, чем он утверждает свое эстетическое кредо и движется в ногу со временем, оставаясь всегда актуальным.

Зарине Сараджян – к. филол. н., младший научный сотрудник отдела новой армянской литературы Института литературы им. М. Абеяна НАН РА, главный специалист отдела маркетинга ЕГУ. Научные интересы: история армянской литературы нового и новейшего периодов. Автор 3 книг и 9 статей. ORCID:0009-0005-4103-2492. zsarajyan@mail.ru

HAMO SAHYAN: LITERARY PORTRAIT

ZARINE SARAJYAN

Summary

Keywords: Hamo Sahyan, poetry, nature, man, worldview, pantheism, homeland, literary relations, translation art, philosophy.

Hamo Sahyan (Hmayak Sahaki Grigoryan, 1914–1993) is an outstanding Armenian poet. His first collection of poems, entitled “On the Banks of the Vorotan”, was published in 1946. Later, he published the collections “On the Peak” (1955), “Nairyan Green Poplar” (1958), “Armenia in the Songs” (1962), “Before Sunset” 1964), “Song of the Cliffs” (1968), “Open, Sezam” (1972) etc.

Being one of the outstanding poets of Armenian literature, he made a unique contribution not only to Armenian, but also to world literature. His poetry, while deeply national, can also be of global interest due to its humanistic ideas. The basis of his poetry is the achievement of harmony, nobility, humanity, the affirmation of national and universal values by merging nature and man, with which he affirms his aesthetic creed and moves in line with time, remaining always up-to-date.

Zarine Sarajyan – Candidate of Philological Sciences, Associate Professor, NAS RA, Institute of Literature after M. Abeghyan, Department of New Armenian Literature, Junior Researcher, Senior Specialist of YSU Marketing Department. Scientific interests: history of Armenian literature of the new and recent periods, Author of 3 books and more than 9 articles. ORCID:0009-0005-4103-2492. zsarajyan@mail.ru